

Հրատարակութիւն
Խովհանի Հայոց Թարեզուծակոն Շնորհառքան

Թէ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ է

ԳՐԱԴԱՐԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐ

ՀԻՄՆԵԼ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԵԼ


Խազմեց

Արխանակ Փարհմանգետ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՈԽԱ» Մանղեսկի պեր. № 8

1916



Հրատարակութիւն
Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան

Տ. 191.



ԱՅՀ

Թէ ԻնչՊէս ՊէՏք է

ԳՐԱԴԱՐԱՆ - ԸՆԹԵՐՅԱՐԱՆՆԵՐ


ՀիՄՆԵԼ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԵԼ

A 43365



Թիֆլիս

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուղեյսկի պեր. № 8
1916



Գրադարանների թիւը գաւառներում հետզհետէ շատանում է, այդ երևում է այն դիմումներից, որ զանազան վայրերից ուղղում են Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհրդին, որոնցով խընդրում են տեղեկութիւններ և խորհուրդներ տալ գրադարան հիմնելու և կառավարելու մասին կամ թէ խընդրում են դպրոցական գրադարան ուղարկել որևէ վայր:

Թէև գրադարանները բազմանում են, բայց, դըժբախտաբար, նրանցից շատերը իրենց նպատակին չեն կարողանում ծառայել, որովհետև գրադարաններ կազմելը և կառավարելը շատ անգամ յանձնում են գրադարանական դործին անծանօթ անձանց, որի պատճառով գրադարանական գործը յաճախ սկսում է կաղալընթանալ անկանոն կերպով:

Գրադարանապետութիւնը մի առանձին արուել է, որ պահանջում է առանձին հմտութիւն և որոշ պատրաստութիւն, ինչպէս օրինակ հաշուապահութիւնը, ուսուցչութիւնը և այլն, ինչպէս որ հաշուապահութիւն չիմացող անձն չի կարող նոր գործ սկսել և կանոնաւոր կերպով վարել, նոյնպէս և գրադարանի գործին անծանօթ անձն անկարող է նոր գրադարան կազմել և կանոնաւոր կերպով կառավարել:

Զի կարելի, իհարկէ, մեղադրել գրադարանական գործը նախաձեռնողներին, քանի որ գրադարանապետութեան արուեստի համար չկան գոնէ տմարնային դաս-

ընթացքներ, ուր մեր ուսուցիչները կարողանային լսել, ծանօթանալ այդ գործին, որով մեծ զարկ տուած կը լինէին գաւառներում գրադարանների բարգաւաճման:

Մինչև անգամ հայ գրականութեան մէջ գրադարանների վերաբերեալ չկայ մի գիրք, որը իբրև ուղեցոյց ծառայէր գրադարաններ կազմողների և գրադարանապետների համար:

Այդ բացը հայ գրականութեան մէջ շատ զգալի է, ուսաի, հիմնուելով մեր երկարամեայ փորձառութեան վրայ այդ ասպարէզում, կազմեցինք սոյն ձեռնարկը յոյս ունենալով, որ մասամբ լրացրած կը լինենք հայ գրականութեան այդ պակասը:

Ա. Փ.



ԳՐԱԴԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՄԱՆԻ ԲՈՅՑԻ.

ՏԻՌԻԹԵԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

Գրադարանները հիմնելու համար նախ և առաջ հարկաւոր է թոյլաւութիւն սաանալ տեղական նահանգապետից:

Դրա համար հարկաւոր է դիմել առանձին խընդրագրով, որի մէջ պէտք է յիշել.

ա) Ո՞րտեղ է բացւում գրադարանը կամ գրադան ընթերցարանը:

բ) Ո՞վքեր են օգտուելու գրադարանից, միմիայն հայ հասարակութիւնը, թէ ուրիշները ևս:

գ) Ո՞ւմ պատասխանատւութեամբ է բացւում գրադարանը (դրա համար պէտք է ներկայացնել վստահելի անձնաւորութիւն, որը պատասխանատու է լինելու իշխանութեան առաջ):

դ) Ո՞ւմ հաշուով, կամ ի՞նչ միջոցներով է պահուելու գրադարանը:

ե) Ո՞ր օրերն է բաց լինելու գրադարանը:

զ) Ո՞րքան է լինելու վճարի չափը թէ գրադարանի և թէ ընթերցարանի:

Եթէ գրադարան ուղում է բանալ կովկ. Հ. Բար. Ընկերութեան ճիւղը կամ մի այլ հիմնարկութիւն, որտ համար հարկաւոր է խնդրի մէջ լիշել թէ կանոնագրութեան մը յօդուածով է թոյլատրուում գրադարան բանալը և մի օրինակ այդ կանոնագրութիւնից (ոռւսերէն լեզուվ) պէտք է ներկայացնել խնդրի հետ միասին:

Чирикай-ръндръндрън риандрън риандрън
стрибъфъ бъндръ бъндръ.

**Его Превосходительству
Господину (такому то) ГУБЕРНАТОРУ
(Отъ такого)**

Прошеніе

Симъ имъемъ честь покорнѣйше просить ВАШЕ ПРЕВОСХОДИТЕЛЬСТВО, разрѣшить намъ открыть библіотеку-читальню въ сел

Правила, на основаніи которыхъ будетъ функционировать библіотека-читальня, заключаются въ слѣдующемъ.

1) Библіотека-читальня обслуживаетъ интересы читающей публики безъ различія національностей и пола, являясь доступной для всего населенія сел

2) Ближайшій надзоръ надъ библіотекой-читальней и отвѣтственность передъ властями ввѣряется

3) Библіотека-читальня будетъ содержаться на счетъ

4) Библіотека-читальня открыта ежедневно, за исключеніемъ неприсутственныхъ дней.

5) Плата за пользованіе библіотекой-читальней въ мѣсяцъ коп., а за входъ въ читальню коп.

Подпись

Сел

, , , 191 г.

Բ Ա Ժ Ի Ն Ն Ե Ր

Գրադարանը կազմելու աշխատանքներին դիմելուց առաջ, պէտք է գրքերի միջից հեռացնել այնպիսիները, որոնք, վչացած լինելով, անհնար է նորոգելը և անպէտք են գործածութեան համար։

Մնացած գրքերը պէտք է բաժանել ըստ լեզւների (եթէ կան այդպիսիները) և դասաւորել այնպէս, որ մէկը միւսի հետ չը խառնուի։

Իւրաքանչիւր լեզուի գրքերը պէտք է ցուցակագրել առանձին առանձին։

Գրադարանի հիմնական աշխատանքը կազմում է գրացուցակը, որը պէտք է ունենայ իր առանձին բաժինները ի նկատի առնելով գրքերի բովանդակութիւնը։

Թէ ինչ բաժիններից պէտք է բաղկացած լինի գրացուցակը, կախուած է տեղական պայմաններից և գրքերի քանակից ու տեսակից։

Օրինակ՝ տարրական դպրոցական գրադարանների համար, որոնցից օգտուելու են զվարապէս դպրոցի առները, բաւական է հայերէն՝ «մանկական-պատանեկական» և ոռւսերէն՝ «ՃԵՏԸԿԻЯ և ՅՈՒՈՇԵՍԿԻЯ ԿНИГИ» բաժինները, իսկ միջնակարգ դպրոցների, կամ այլ մեծ գրադարանների համար, որոնցից օգտուելու են հասարակութեան բոլոր խաւերն էլ, նայած գրքերի տեսակին ու քանակին, կարող են ունենալ հետեւալ բաժինները։

ԻՄ ԱՆԿԱԿԱՆ-ԱՎԱՏԱՆԵԼՎԱՆ. — Եթէ այս բաժնի գրքերը քիչ են կարելի է միացնել, եթէ շատ են կարելի է մանկականի համար առանձին բաժին ունենալ,

իսկ պատանեկականը միա ցնել գեղարուեստականի հետ:

II Գեղարուեստական.— Վէպեր, պատմուածքներ, պատկերներ, թատերգութիւններ, բանաստեղծութիւններ:

III Պատմական.— Հայոց պատմութիւն, ընդհանուր պատմութիւն, կենսագրութիւն, ազգագրութիւն, տեղագրութիւն, հնագիտութիւն, ճանապարհորդութիւն և աշխարհագրութիւն:

IV Գիտական.— Բժշկութիւն, առողջապահութիւն, բնագիտութիւն և արհեստագիտութիւն:

V Պարզերական հրատարակութիւններ.— Ամսագիր, շարաթաթերթ, օրաթերթ:

VI Զանազան.— Դպրոցական, կրօնական, քարտէզներ, ալբոմներ, բառարաններ և այլ տեղեկատուգրքեր:

Եթէ «Զանազան» բաժնի մէջ որևէ ճիւղին վերաբերեալ գրքերից շատ կան, կարելի է անկախ բաժին կազմել, ինչպէս օրինակ՝ «կրօնական», «դպրոցական» և այլն: Իսկ եթէ^{*} միւս բաժիններից որևէ մէկի գըրքերը քիչ են, չարժի առանձին բաժին պահել, այլ պէտք է միացնել միւս իրեն յարմար բաժնի հետ. օր. «պատմական» բաժինը կարելի է միացնել «գիտական» բաժնի հետ:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ բաժիններն են ուղղեցոյց լինելու թէ մասամբ գըրդարանապետներին և թէ ընդհանրապէս ընթերցողներին, զրա համար կարեւոր է, որ գրքերը ըստ բովանդակութեան բաժինների վերածողը ծանօթ լինի հայ և ոռւս գրականութեան:

III

ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԱՎԴՐԵԼԸ

Նախ պէտք է կտրատել քառանկիւնի թերթիկներ
(տե՛ս օր. 1.) մօտաւորապէս այնքան, որքան որ ցուցակագրուող գրքերի թիւն է:

օր. № 1

№1	Շ Մ Ի Տ Օ.
	Առաջին վիշտ
	(Թարգմ. ռուսերէնից)
<u>64</u> 40	Թիֆլ. 1896

Վերցնել գրքերից մէկը և այդ թերթիկներից մէկի վրայ քիմիական մատիտով կամ թանաքով (եթէ պահւելու են թերթիկները) նշանակել վերևից հեղինակի ազգ անունը և ընդգծել թերթիկի մէջտեղում նշանակել գրքի և թարգմանողի անունները, ներքել աջ անկիւնում նշանակել տպագրութեան տեղն ու տարին, իսկ ձախ անկիւնում, կոտորակի ձևով, վերևը՝ երեսների թիւը, իսկ ներքել՝ գրքի գինը:

Եթէ թերթիկը այս ձևով պատրաստում է պէտք է դնել գրքի մէջ, առաջին երեսում և նոյն ձևով վարել 2-րդ, 3-րդ և միւս մնացած գրքերի հետո:

Բոլոր գրքերը ցուցակագրելուց յետոյ, պէտք է դարսել նախօրօք պատրաստած գարակների վրայ, ըստ մեծութեան, նւազման կարգով:

Վերցնել ամենաառաջին գիրը, թէ գրքի և թէնը միջի թերթիկի վրայ նշանակել № 1, թերթիկը դուրս հանել գրքից, դնել առանձին տեղ, իսկ գիրը՝ իր տեղը, վերցնել երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն, մին-

չե վերջին գիրքը, թերթիկների ու գրքի վրայ նշանակել միևնոյն № 2, № 3, № 4... թերթիկները դուրս հանել, դնել առաջւան թերթիկների վրայ, իսկ գրքերը դարսել իրանց տեղերը, որից յետու զբաների վրայ պէտք է կպցնել մանր թերթիկներ և վրաները նշանակել համապատսխան համարները:

IV

ԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ

Գրքերից հանւած թերթիկները, որ դարսուած են համարական կարգով, պէտք է արտադրել կահացոյց, (ինվենտարնի) գրքում հետեւալ ձևով (տես օր. 2):

օր. № 2

ԳՐՔԵՐ № №	Հեղինակի անունը	Գրքի անունը	տպագ. տեղը և տարին	Գ. ի ն ը
1	Շիմու Օ.	Առաջին վիշտ	Թիֆլ. 1896	ր. 40

Այս ձևով կահացոյցի գրքի վերջին համարը ցոյց կը տայ թէ զբաղարանում որքան գիրք կայ, եթէ մի նոր գիրք է աւելանում, պէտք է գրել

թերթիկը, գիրքը դնել վերջին համարի մօտ և մտցնել կահացոյցի մատեան:

Երբ գրադարանը նոր է կազմւում գրքերի ըստ մեծութեան գարսելու կարգը պահպանում է, իսկ այնուհետեւ այդ կարգը չի կարող պահպանուել, որովհետեւ նոր գրքեր ստացւում են զանազան ժամանակներում և լինում են տարբեր մեծութեան:

Դրքերի ըստ մեծութեան դարսելը այն նշանակութիւնն ունի, որ նախ ահազին տեղ է խնայւում և երկրորդ՝ գրքերը հեշտութեամբ են տեղերը դարսւում և վերցւում:

Բոլոր թերթիկները կահացոյցի մատեան մուծելուց յետոյ պէտք է իրարից առանձնացնել ի նկատի առնելով այն բաժինները, որոնց ցուցակը առաջ է բերւած վերը:

Ընդարձակ սեղանի վրայ պէտք է գրել կամ կպցնել հայերէն կամ ոռւսերէն տառերը, այբուբենական կարգը ինկատի առնելով։ Տառերի իրարից ունեցած հեռաւորութիւնը պէտք է հաւասար լինի թերթիկների մեծութեանը։

Վերցնել որեէ բաժնի, օրինակ «մանկական»ի թերթիկները և իւրաքանչիւրը դնել իր համապատասխան տառի վրայ, ինկատի առնելով գրքի հեղինակի սկզբնական տառը։ Այս ձևով միենոյն հեղինակի բոլոր մանկական գրւածքները կնկնեն միատեղ։

Մանկական բաժնի բոլոր թերթիկները այբբենականի վերածելուց յետոյ զգուշութեամբ պէտք է դարսել իրար վրայ այնպէս, որ մի տառի թերթիկները միւսի հետ չխառնւեն։

Վերցնել իւրաքանչիւր բաժնի թերթիկները առանձին-առանձին, մի ծայրում երկու տեղից ծակոտել և թել անց կացնելով ամրացնել այնպէս, որ թերթիկները կարելի լինի ազատ կերպով թերթել (տես օր. 3):

Այս ձևով պատրաստ կը լինի քարտային սիստե-

մով կազմած գրացուցակը, որից կօգտւեն բաժանորդները գրադարանից դիրք վերցնելու ժամանակ:

օր. № 3

Ա1	Շ Մ Ի Դ Տ Օ.
○	Առաջին վիշտ
○	(Թարգմ սուսերէնից)
64 40	Թիֆլ. 1896

Որովհետև այդ գրացուցակներից շարունակ օգտվելու են, հարկաւոր է վերցնել հաստ թղթի թերթիկներ կամ, եթէ հնարաւոր է, դեղին կարտօններ, որոնք ծուռում են բայց չեն կոտրւում և երկար ժամանակ կարողանում են դիմանալ:

Եթէ հնարաւոր չի այդպիսի մնայուն թերթիկներ ունենալ, այն ժամանակ կարելի է մի առանձին մատեան կազմել և թերթիկներից այբբուբենական կարգով արտագրել այդ մատեանի մէջ, որը կը ծառայի բաժանորդների համար իբրև օգտուելու գրացուցակ:

Գրացուցակը կազմելուց յետոյ պէտք է ստուգել թէ արդեօք թիւրիմացութեամբ գրացուցակի մէջ չեն մտած իշխանութեան կողմից արգելւած գրքեր, եթէ կան, պէտք է հանել ցուցակից, ոչնչացնել և տեղը նոր գրքեր դնել:

Արգելւած գրքերի համար իշխանութիւնը իւրաքանչիւր տարի հրատարակում է առանձին գրացուցակներ, որ կարելի է ձեռք բերել կամ գրադարանների տեսչից և կամ թէ գրավաճառներից:

V

ՄԱՏԵԱՆՆԵՐ

Դրադարանի համար բացի կահացոյց մատեանից և դրացուցակներից, հարկաւոր են՝ բաժանորդների անձնական հաշիւների մատեան, գրքերի ու դրամների ընդհանուր օրհաշիւ և բաժանորդատետր:

Անձնական հաշիւների մատեանի վերել գրւում է բաժանորդի ազգանունը. (օր. 4) և իսկ գիմացը №, օր. № 4

Աղդ տնուն.

բաժ. №

Հասցէն.

Ամսաթիւ	Ստացւած է			Տրուած է		Եըլ է ստաց.
	Գրաւ.	Ամս.	Տուգ.	Գրքի Ն.	Եըլէ տար.	

օր. 5.

Ամիս

Ամսաթիւ	Բաժ.	Ստացւած է			Տրուած գրք. Ա Ա		Վերադ. գրաւ.
		Գրաւ.	Ամս.	Տուգ.	Հայերէն	Ռուսերէն	

Երեսի 1-ին կիսուս գրւում է բաժանորդից ստացած դրամները, իսկ միւս մասում՝ տրւած և ստացած գրքերը:

Օրհաշիւ մատեանի վերելը (ահս օր. 5) գրւում է ամիսը և ներքեռում՝ իւրաքանչիւր օրւայ կատարած դորձողութիւնը:

Բաժանորդատետրը, որի մէջ նշանակւում է բաժանորդին տրւած գրքերն ու ստացւած դրամները, հետեւալ ձեն է ունենալու: Առաջին երեսը (օր. 6.)

(օր. 6)

№

ԲԱԺԱՆՈՐԴԱՏԵՏՐ

(ԱՅՍ ԻՆՉ ՏԵՂԻ)

ԳՐԱԴԱՐԱՆԻ

Աղջանուն

Բաժանորդագրւել է

"..... 1-ին , 191 թ.

Բաժան. դադարեցրել է

"..... 1-ին , 191 թ.

Ի նկատի ունենուզ այս հանգամանքը, որ լինում էն բաժանորդներ, որոնք գրքերը մաքուր չեն պահում և վշացնում են, այդպիսին երին մաքուր պահելու մասին յիշեցնելու համար բաժանորդատետրի երրորդ երեսին կարելի է տպել հետեւալ ազդը (օր. 7)

(օր. 7)

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Դրբի վրայ ոչինչ միք գրի և միք ընդգծի
բառերը։
Միք ծալի հրեաները։
Միք թերթի երեսները։
Միք շուռ տա գիրքը կարդալու ժամանակ,
զբանից գիրքը ճղում է և թափւում են
ամբողջ երեաները։
Միք կեղաստացնի և միք պոկոտի թերթերն
ու պատկերները գրքերի միջից։
Գրքերի ճետ վերաբերեցիք բարեխորհն,
նրանք ծառայում են ոչ քե միայն Ձեզ,
այլ շատերին։

Սակայն գրադարանապետը, կամ նա, ով որ ստա-
նում է վերադարձրած գրքերը, այս ազդի վրայ մեծ
յոյս չպէտք է դնի և տւած կամ վերադարձրած դէպ-
քում հնար եղածին չափ պէտք է թերթի գիրքը և յի-
շեցնի բաժանորդին, թէ ինչ դրութեամբ է գիրքը վե-
րադարձրել։

Եթէ մի բաժանորդ գրքի վրայ մատիտով կամ թա-

օր. № 8

Ստացւած է գրաւական բուրյի

Ամիս	Թիւ	Վշտը	Ամիս	Թիւ	Վշտը	Ամիս	Թիւ	Վշտը
—	—	—	—	—	—	—	—	—

թ, գրաւականը յետ ստացայ

Նաքով մի որևէ բան է գրում և գրադարանապետը գիրքը ստանալիս չի նկատում այդ բանը, այն ժամանակ մի ուրիշ բաժանորդ (մանաւանդ փոքրերը) տեսնելով այդ գրուածը, ինքն էլ իր կողմից է մի ուրիշ բան աւելացնում և այսպիսով գիրքը փշանում է:

Բաժանորդատեսը 4-րդ երեսում տպւում է բաց-
ման ժամերը և թէ երբ է զբաղարան-ընթերցարանը
ամբողջ կամ կէս օրով փակ լինում:

5-ըդ երեսում զետեղւում է դրամական հաշիւը և կազմւում է հետեւալ ձևով (օր. 8).

Այդ երեսի վերևում նշանակւում է, թէ որքան զը-
րաւական է ստացւած բաժանորդից, իսկ ներքենումբա-
ժանորդը ստորագրում է թէ երբ և զըաւականը յետ
ստացել:

Եթէ բաժանորդը գրքեր վերցնում է երաշխաւորութեամբ, այն ժամանակ գրաւականի տեղը կը գրուի թէ ով և որքան ժամանակով է երաշխաւորում:

6-ըդ երեսը յառկացւում է արւած զբքերի համար (օր 9):

op. № 9

S P A H U V E L Q R F B P

Իսկ 2-րդ 7-րդ և 8-րդ երեսների վրայ (շապիկներ) կարելի է զետեղել գըադարան-ընթերցարանի կանոնադրութիւնը:

Բացի այդ, գըադարանը պէտք է ունենայ 2 տեսակ պահանջամբերթեր, որոնցից մէկը (օր. 10) տուն տրուելիք գրքերի համար և միւսը (օր. 11) ընթեր-

օր. № 10

« Տ-ին Բաժ. № —

Աղդ անուն ։

օր. № 11

Ազգ-անուն ։

Հասցէն ։

« » Կախար. № ։

Յանկացած գրքերի №№

Հայերէն Բահերէն

A 43365



ցարանում կարդացւելիք գրքերի համար Իրարեց զանազանելու համար կարելի է տպագրել տարբեր գոյնի թղթերի վրայ:

Երաշխաւորութեան համար պէտք է ունենալ առանձին բլանկներ (օր № 12), որի վրայ երաշխաւորութ ստորագրում է, նշանակելով թէ մրքան ժամանակով և քանի գրքի համար է երաշխաւորում:

օր. № 12

ԲԱԺ Ն

Ազգ անուն

Հասցէն

Քանի զրքի հր. (իւրաքանչիւր անգամ)

Ո՞րբան ժամանակով է երաշխաւորում)

Երաշխաւորողի ստորագրութիւնը

191 թ.

VI

ՄԱՏԵԱՆՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՒ ԳՐԹԵՐ ՏԱԼՈՒ ԶԵԽԸ

Բաժանորդը զրացուցակից ընտրում է իր ցանկացած զիրքը և համարը՝ զրում է պահասջաթերթի 2-րդ սիւնեակում (օր. 10) իսկ եթէ ուռւսերէն չ՝ 3-րդ սիւնեակում։ 1-ին սիւնեակում զրում է վերադարձրած զրքի համարը։ Պահանջաթերթի վերևում ձախ կողմից զրում է ամսաթիւը, աջ կողմը բաժանորդատետրի համարը իսկ ներքեւ՝ իր ազգ անունը։ Որովհետև կարող է պատահել, որ բաժանորդի պահանջած զիրքը տարւած լինի դրադարանից, ուստի բաժանորդը պահանջաթերթի վրայ մի քանի համար պէտք է զրի։

Ցանկացած զրքի համարները գրելուց յետոյ պահանջաթերթը, բաժանորդատետրը և վերադարձւելիք զիրքը յանձնում է զրադարանապետին, Վերջինս ըստուգելով պահանջաթերթը, բաժանորդատետրի մէջ նշանակում է զրքի ստացման մասին և պահանջաթերթը յանձնում է իր օգնականին, եթէ ունի, իսկ եթէ ոչ, ինըն գնում է և պահանջաթերթում նշանակուած զիրքը գտնում։ Այստեղ միջանկեալ պէտք է ասել, որ իւրաքանչիւր զրքի մէջ պէտք է զրւած լինեն կարտոններ, որոնց վրայ պէտք է զրւած լինեն զրքի համարը, անունը և հեղինակը։

Երբ պահանջաթերթի համաձայն գրադարանապետ կամ օգնականը գտնում է զիրքը, կարտոնի վրայ մատիտով նշանակում է կոտորակի ձևով, գծից վերև՝ բաժանորդի համարը, իսկ ներքեւ՝ թէ երբ է տրւած, կարտոնը հանուլում է, զրւում է զրքի տեղը, իսկ զիրքը տրւում է բաժանորդին, նախապէս զրքի համարը նշանակելով բաժանորդատերի մէջ:

Ամբողջ օրւայ պահանջաթերթերը հաւաքւում են և երեկոյեան մուծւում անձնական հաշիւների մատեանը:

Պահանջաթերթի վրայ նշանակուած համարի համաձայն բացւում է բաժանորդի անձնական հաշիւը և զրքերի բաժնի 1-ին սիւնեակում նշանակւում է զրքի համարը, 2-րդ սիւնեակում երբ է տրւած, իսկ 3-րդ սիւնեակում երբ է յետ ստացւած:

Երբ բաժանորդները շատ են իսկ աշխատող ձեռքերը քիչ, այդ դէպքում յարմար է բոլոր պահանջաթերթերը հաւաքել և երեկոյեան ազատ ժամանակ մուծել մատեան, իսկ եթէ բաժանորդները քիչ են կամ աշխատող ձեռքերը շատ, այդ դէպքում կարելի է զիրքը տալիս իսկոյն մատեան մուծել:

Երբ բաժանորդից դրամ է ստացւում պէտք է զըրել անզորբազրերի վրայ (օր. 13):

Անգորբագրի կարոնը տրւում է բաժանորդին և զրամը նշանակում է բաժանորդատերի մէջ (օր. № 8) իսկ արմատը մնում է զրադարանում, որից մուծւում է բաժանորդի անձնական հաշիւը:

Եթէ որեէ մէկը ուզում է զիրքը ընթերցարանում կարդալ, պէտք է նախ և առաջ ծառայի մօտ թողնի զիխարկը, վերաբերն և կամ մի այլ իր և ծառայից ըստանայ կախարանի համարը: Պահանջաթերթի վրայ (օր. № 11) նշանակում է այդ համարը իր ազգն ու հասցէն և ցանկացած զրքի համարը: Այդ պահանջաթերթը կախարանի համարի հետ միասին տրւում է զրադարանապետին: Վերջինս բերում է զիրքը տալիս է ընթերցո-

oP. № 13

(ԱՅՍ ԻՆՉ) ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1. Հ.

Մուսակած և բաժներ

№

	<i>r.</i>	<i>q.</i>
Քըստական	.	.
Ամսավճար	.	.
Տուգանք	.	.

ԲՆ 191 թ.

Գրադարանապետ

(ԱՅՍ ԻՆՉ) ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1. Հ.

Մուսակած և բաժներ

№

	<i>r.</i>	<i>q.</i>
Քըստական	.	.
Ամսավճար	.	.
Տուգանք	.	.

ԲՆ 191 թ.

Գրադարանապետ

զին, իսկ կախարանի համարը պահանջաթերթի հետ
միասին պահում է իր մօսա ելքը ընթերցողը դիրքը վե-
րադարձնում է՝ յետ է ստանում կախարանի համարը:

Այս ձևով ընթերցողը չի կարող գիրքը հետը տանել, որովհետև ծառան առանց համարի հազուստը չի վերադարձնի:

Գիրքը ընթերցարանում կարդացած դէպքում կարտոնի վրայ բաժանորդի համարի տեղ պէտք է նշանակել «ընթերցարան» և երբ յետ է ստացւում, մատիտով պէտք է գիծ քաշել վրան:

Այս կարտոնների միջոցով ոչ միայն կարելի է իմանալ թէ գիրքն ում մօտ է և երբ է տարել, այլ և կարելի է իմանալ թէ իւրաքանչիւր գիրք որո՞շ ժամանակւայ ընթացքում քանի՞ անդամ է կարդացւել. այս տեղեկութիւնը շատ կարևոր է գրադարանի համար:

Երբ կարտոնի երկու երեսն էլ ժամանակի ընթացքում լցւի, կարելի է ջնջել ռետինով, կամ թէ վրայից սպիտակ թուղթ կպցնել, նախապէս կարտոնի վրայ նըշանակելով թէ մինչև ջնջելը գիրքը քանի անդամ է պահանջւել:

VII

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Գրադարան-ընթերցարանի կանոնադրութիւնը կազմելու համար որպէս ուղեցոյց առաջ ենք բերում կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. կենտրոնական գրադարանի կանոնադրութիւնը, որը ընդունելով իրեն հիմք, կարելի է փոփոխել և յարմարեցնել տեղական պայմաններին:

1) Ընթերցարան յաճախողները գրքեր կամ պարբերական հրատարակութիւններ կարդալու համար ամսական վճարում են 10 կոպէկ կամ օրական մուտքի համար 1 կոպէկ:

2) Գրադարանից արուող իւրաքանչիւր գրքի համար բաժանորդը վճարում է 15 կոպէկ ամսական, թողնելով գրաւական իւրաքանչիւր գրքի համար մի ռուբլի, եթէ վերցրած գրքերի արժէքը գրաւականից

աւելի լինի, այն ժամանակ կը պահանջուի և լրացուցիչ գրաւական:

Եթէ բաժանորդը վերցնում է որևէ երկի մի մասը, դարձեալ պէտք է վճարի ամբողջ երկի արժէքը:

Մի բաժանորդը կարող է վերցնել մի անդամից ոչ աւելի քան 5 դիրք, ամեն մի գրքի համար պահպանելով վերոյիշեալ պայմանները:

3) Ամսավճարը հաշւում է բաժանորդագրութիւնը գրուած օրից և ոչ թէ ամսի մէկից:

4) Եթէ բաժանորդագրութիւնը դադարեցնելիս ժամանակից անցած է լինում մինչև եօթն օր, չի հաշւում, իսկ եօթն օրից աւելին հաշւում է որպէս ամբողջ ամս:

5) Գրադարանի բաժանորդները իրաւունք ունին ձրի յաճախելու ընթերցարանը:

6) Պարբերական թերթերից մի մասը գրադարանի հայեղողութեամբ գուրս չի տրուի:

7) Օրաթերթեր ոչ ոքի առն չեն տրւում, իսկ ընթացիկ ամսագրերը և շաբաթաթերթերը առն տրւում են յաջորդ համարը ստանալուց յետոյ:

8) Գրքերը կարելի է պահել ոչ աւել քան երկու շաբաթ: Այս ժամանակից աւելի իրանց մօտ գրքեր պահել ցանկացողները պէտք է ժամանակին յայտնեն գրքադարանապետին, որը, եթէ զիրքը ուրիշ պահանջողներ չունենայ, կարող է թողնել նրանց մօտ որոշ ժամանակով: Նշանակուած ժամանակից աւելի պահողը, եթէ վաղօրօք յայտնած չի լինում, իւրաքանչիւր օրւայ համար վճարում է 2 կոպէկ տուգանք:

9) Իւրաքանչիւր փշացրած կամ կորցրած գրքի համար բաժանորդը վճարում է կորցրած գրքի մէկ ու կէս արժողութիւնը: Իսկ եթէ կորցրածը որևէ երկի մի մասն է, այն ժամանակ պահանջւում է ամբողջ երկի մէկ ու կէս արժէքը:

10) Այդ գումարը նախ և առաջ յետ է պահում գրաւականից, իսկ մնացեալը պահանջում է բաժանորդից լրացնել:

11) Եթէ բաժանորդը մի ամսուայ ընթացքում չի վերադարձնում գիրքը, համարւում է կորած: Այս դէպքում բաժանորդի գրաւականով զնուում է գիրքը, իսկ մնացորդը հաշւում է որպէս ամսավճար և տուգանք: Եթէ գրաւականը չի բաւականանում, այդ դէպքում պահանջում է բաժանորդից լրացնել պակասը, իսկ եթէ աւելանում է, վերադարձնուում է բաժանորդին:

12) Երաշխաւորութեամբ գիրք վերցնող բաժանորդը եթէ մի ամսուայ ընթացքում գիրք չի վերցընում, չի վճարում ամսավճարը և կամ թէ այդ մասին ոչինչ չի յայտնում գրագարանին, համարւում է բաժանորդագրութիւնը դադարեցրած:

13) Իսկ գրաւականով գիրք վերցնողը եթէ 7 ամսուայ ընթացքում գիրք չի վերցնում և չի վճարում ամսավճարները, նոյնպէս համարւում է բաժանորդագրութիւնը դադարեցրած և գրաւականը հաշւում է որպէս ամսավճար:

14) Եթէ բաժանորդը 3 ամսուայ ընթացքում չի վճարում բաժանորդավճարը, բաժանորդագրութիւնը դադարեցնուում է:

15) Գրադարանի բաժանորդը ստանում է բաժանորդատեար, որի մէջ նշանակւում են նրա վերցրած գրքերը: Այս տետր կորցնողը կարող է ստանալ նորը, վճարելով 5 կոպէկ արժէքը:

16) Բաժանորդավճարի, տուգանքի և գրաւականի բանակութիւնը նշանակւում է բաժանորդատետրի վրայ:

17) Գրաւականը վերադարձնուում է այն անձնաւորութեանը, որի անունով գրուած է բաժանորդատետրը, անկախ նրանից թէ այդ բաժանորդատետրով ով է օգտուելիս եղել: Եթէ բաժանորդը ցանկանում է, որ իր գրաւականը ուրիշը յետ ստանայ, այդ մասին

գրաւոր կերպով պէտք է յայտնի գրադարանին:

18) Հազուագիւտ գրքեր, բառարաններ և տեղեկատու գրքեր տուն չեն տրւում:

19) Ոչ բաժանորդին գիրք կը տրուի այն դէպքում, եթի նա թողնի իրեկ զրաւական գրքի կամ ամբողջ երկի մէկ ու կէս արժէքը և ամեն մի գրքին իւրաքանչիւր օրուայ համար վճարէ 2 կոպէկ:

20) Գրադարան-ընթերցարանում գտնւում է մատեան, որի մէջ բաժանորդները և յաճախողները կարող են գրել իրենց գանդատները և պահանջները:

Այստեղ մենք առաջ բերինք այնպիսի գրադարաններ կառավարելու ձեր, որոնց գրքերի թիւը հասնում է մի քանի հազարի, իսկ բաժանորդների թիւը՝ մի քանի հարիւրի: Իսկ այն զրադարանները, որոնք հազարից պակաս գրքեր ունին և հարիւրից էլ պակաս բաժանորդ, կարող են կառավարելու մի քանի ձևերը կրծատել: Այսպէս օրինակ աւելորդ կը լինեն պահանջաթերթերը, որոնցով բաժանորդները և ընթերցողները գըրքեր են պահանջում ընթերցանութեան համար. այսպիսով կվերանան նաև դրանց հետ կապուած աշխատանքները:

